ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<_____> 2010 ԹՎԱԿԱՆԻ N _____

<< ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ> ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ> ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ <ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Պետական կառավարչական հիմնարկների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի N 765 որոշմամբ հաստատված <Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված ծրագրեր իրականացնող պետական հիմնարկի օրինակելի կանոնադրության> 24-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. <Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկին ամրացված գույքի կազմից՝ Երևանի Վրացյան 73 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 44.35 քառ.մետր ընդհանուր մակերեսով աջակողմյան մուտքը, 457.6 քառ.մետր ընդհանուր մակերեսով 2-րդ և 3-րդ հարկերն ամբողջությամբ, 13.8 քառ.մետր մակերեսով պարիսպը /ընդամենը 312.368 հազ.դրամ հաշվեկշռային արժեքով/ և 0.129 հեկտար մակերեսով պետական սեփականություն հանդիսացող հողամասն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև փաստացի ծրագրերի իրականացման ավարտը, հատկացնել <<Կրթական ծրագրերի կենտրոն> ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկին՝ նպատակային օգտագործման համար։

2. Թույլատրել <<Կրթական ծրագրերի կենտրոն> ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկին՝ սույն որոշման 1-ին կետով հանձնված 0.129

հեկտար մակերեսով հողամասն օգտագործել <Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն > պետական ոչ առևտրային կազմակերպության հետ համատեղ։

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, սահմանված կարգով , <<Կրթական ծրագրերի կենտրոն> ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկի հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման – ընդունման աշխատանքները և գույքային իրավունքների պետական գրանցումը՝ այն իրականացնելով <<Կրթական ծրագրերի կենտրոն> ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկի միջոցների հաշվին։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նշված որոշման նախագծի /այսուհետև՝ նախագիծ/ ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերության միջև 2009 թվականի հունիսի 5-ին Երևան քաղաքում ստորագրված 4565 AM <Կրթական որակի և համապատասխանության երկրորդ ծրագիր> ֆինանսավորման համաձայնագրով նախատեսված ծրագրի աշխատանքները բնականոն իրականացնելու անհրաժեշտությամբ:

Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ ներկայումս <Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկին հանձնված Երևանի Վրացյան 73 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի աջակողմյան մուտքը՝ 44.35 քառ.մետր մակերեսով, 2-րդ և 3-րդ հարկերն ամբողջությամբ՝ 457.6 քառ.մետր ընդհանուր մակերեսով, 13.8 քառ.մետր պարիսպը և դրան հարակից 0.129 հեկտար մակերեսով հողամասն անհատույց օգտագործվում են <<Կրթական ծրագրերի կենտրոն> ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 22.11.1999թ. թիվ 395-Մ հրամանի հիման վրա: Համաձայն <Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ կետի՝ օգտագործող է համարվում այն սուբյեկտը, որի անվամբ, նշված օրենքով սահմանված կարգով, գրանցված է անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքը:

Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հասցեում գտնվող շենքի առաջին հարկից 222.5 քառ մետր տարածքը Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. մարտի 11-ի թիվ 408-Ն որոշմամբ ամրացվել է <Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն> պետական ոչ առևտրային կազմակերպությանը , ուստի նախարարությունը գտնում է նպատակահարմար 0.129 հեկտար մակերեսով հողամասը թույլատրել համատեղ օգտագործման:

Հիմք ընդունելով վերը նշվածը և հաշվի առնելով, որ անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքը ենթակա է սահմանված կարգով գրանցման, ուստի ՀՀ կրթության և գիտության նախարարությունում մշակվել է ներկայացված որոշման նախագիծը: